ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. N2, ԿԱՅԱՑԱԾ 05.05.2014Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ակադեմիայի գիտական խորհուրդը (այսուհետև՝ Գիտական խորհուրդ) ակադեմիայի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող ու կարգավորող մարմին է և գործում է ռեկտորի նախագահությամբ: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:
2. Գիտական խորհրդի նախագահի տեղակալն ի պաշտոնե ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն է:
3. Գիտական խորհուրդն ընդունված կարգով՝
   - հաստատում է իր աշխատակարգը,
   - քննարկում է ակադեմիայի ուսումնական գործունեությունը, մասնագիտությունների և մասնագիտացումների անվանումների անվանացանկը,
   - քննարկում է ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ակադեմիայում կատարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների մասին,
   - որոշում է ֆակուլտետի դեկանների ընտրության ընթացակարգը և ժամկետները,

- իրականացնում է ակադեմիայի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են սույն կանոնակարգից:
- ընդունում է համապատասխան որոշումներ և հսկում դրանց կատարման գործընթացն իր լիազորություն-ների սահմաններում:

4. Գիտական խորհրդի որոշումները ենթակա են պարտադիր կատարման ակադեմիայի բոլոր կառուցվածքային ստորա-բաժանումների, պաշտոնյաների, ծառայողների և ունկնդիր-ների համար:
5. Ակադեմիայի Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականները, գիտական քարտուղարը, ուսումնական բաժնի պետը, ֆակուլտետների դեկանները, տեղակալները, ամբիոնների վարիչները, գլխավոր հաշվապահը, գրադա-րանի ղեկավարը, ինչպես նաև կառուցվածքային այլ ստո-րաբաժանումների ղեկավարները, Հայաստանի Հանրապե-տության գիտության և կրթության բնագավառի առաջատար մասնագետները:
6. Գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 45-ը:
7. Գիտական խորհուրդն իր աշխատանքները կատարում է նիստերի միջոցով, առնվազն երկու ամիս նիստ պարբե-րությամբ:

8. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր անդամների երկու երրորդի ներկայության դեպքում:
9. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ և իրագործվում ռեկտորի հրամաններով:
10. Եթե ռեկտորը դեմ է որոշմանը, ապա հարցը նորից դրվում է քվեարկության: Եթե վերանայման ժամանակ գիտական խորհուրդը պահպանում է իր որոշումը գիտական խորհրդի անդամների թվի 2/3-ով, ռեկտորը հաստատում է որոշումը:
11. Ռեկտորի որոշմամբ որոշ հրատապ հարցերի կապակցությամբ գիտական խորհուրդը կարող է որոշում կայացնել հարցման միջոցով:
12. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմված աշխատանքային պլանով: Ռեկտորի որոշումով կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:
13. Գիտական խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր և մշտական հանձնաժողովներ: Հանձնաժողովների կազմը հաստատում է ռեկտորը:
14. Հանձնաժողովների կառուցվածքը և կազմը ռեկտորի ներկայացմամբ հաստատում է գիտական խորհուրդը: Յուրաքանչյուր հանձնաժողով ընտրում է իր նախագահին:
15. Աշխատանքից ազատվելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում ակադեմիայի աշխատակից հանդիսացող գիտա-

կան խորհրդի անդամն ազատվում է նաև գիտական խորհրդի անդամի պարտականությունից:

16. Գիտական խորհրդի հիմնական լիազորությունները՝

ա) ռեկտորի ներկայացմամբ հաստատում է ակադեմիայի զարգացման գլխավոր ուղղությունները և այն ներկայացնում կառավարման խորհուրդ հաստատման համար.

բ) հաստատում է իր աշխատակարգը և յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանը.

գ) ներկայացնում է առաջարկություններ ակադեմիայի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

դ) քննարկում և հաստատում է ակադեմիայի բոլոր ուսուցման ձևերի մասնագիտությունների ուսումնական պլանները: Անհրաժեշտության դեպքում կատարում է փոփոխություններ ուսումնական պլանների մեջ,

ե) հաստատում է ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրերը.

զ) հաստատում է ակադեմիայի ուսուցման գործընթացի ժամանակացույցը,

է) հաստատում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ամբիոնների վարիչների ընտրության կարգերը,

թ) քննարկում և հաստատում է ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր ուղղությանների եռամսյակային պլանները,

ժ) քննարկում է ուսամնամեթոդական և ուսումնական բաժինների տարեկան հաշվետվություններն ու ընդունում համապատասխան որոշում.

ժա) քննարկում է ընդունելության քննությունների արդյունքները և ընդունում համապատասխան որոշում հաջորդ ուսումնական տարվա ընդունելության քննությունների կազմակերպման մասին,

ժբ) իրականացնում է ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրությունը,

ժգ) ընդունում է ակադեմիայի պատվավոր կոչումներ շնորհելու որոշումներ (պատվավոր դոկտոր, պատվավոր պրոֆեսոր, վաստակավոր գիտաշխատող),

ժդ) շնորհում է գիտական կոչումներ (դոցենտ, պրոֆեսոր),

ժե) քննաշրջանների արդյունքների հիման վրա ընդունում է որոշումներ ունկնդիրներին խրախուսելու և պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ հեռացում և այլն,

զե) լուծում է Ակադեմիայի կանոնադրությունից բխող ուսումնական, մեթոդական և գիտական գործունեության հետ կապված այլ հարցեր,

ժէ) իրականացնում է օրենքով և ակադեմիայի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ: